

4.3. Չբուսաշրջություն

4.3.1. Միջազգային զբոսաշրջություն

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2016-2017թթ. հունվար-հունիսին

	2016թ. հունվար-հունիս	2017թ. հունվար-հունիս	2017թ. հունվար-հունիսը 2016թ. հունվար-հունիսի նկատմամբ
<i>մարդ</i>			
Ժամանողներ¹			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	501 118	622 381	124.2
որոնցից տեղավորվել են՝			
հյուրանոցային տնտեսության օբյեկտներում ³	73 976	118 651	160.4
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	427 142	503 730	117.9
Մեկնողներ			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ	470 693	570 400	121.2
որոնցից ուղևորությունը կազմակերպվել է			
զբոսաշրջային գործակալությունների կողմից	4 249	1 626	38.3
ինքնուրույն	466 444	568 774	121.9

¹Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածուների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2013թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

²Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեն ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

³Ցուցանիշը ներառում է միայն ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակով ներկայացված տնտեսավարող սուբյեկտների տվյալները:

ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու աճի տեմպը 2016-2017թթ. հունվար-հունիսին¹

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2016թ. հունվար-հունիս	2017թ. հունվար-հունիս	
Ընդամենը	100.0	100.0	160.4
<i>այդ թվում՝</i>			
ԱՊՀ երկրներ	26.3	27.2	165.6
<i>այդ թվում՝</i>			
Ուկրաինա	2.6	2.0	123.7
Ռուսաստանի Դաշնություն	22.3	23.4	168.4
ԱՊՀ այլ երկրներ	1.4	1.8	199.9
ԵՄ երկրներ	23.4	19.7	135.0
<i>այդ թվում՝</i>			
Նիդերլանդներ	0.6	0.5	133.2
Իտալիա	2.0	1.9	153.6
Ֆրանսիա	4.7	3.9	134.4
Գերմանիա	6.1	4.3	114.4
Միացյալ Թագավորություն	2.7	2.3	132.0
ԵՄ այլ երկրներ	7.3	6.8	148.3
Այլ երկրներ	50.3	53.1	169.5
<i>այդ թվում՝</i>			
ԱՄՆ	10.1	9.6	151.9
Իրանի Իսլամական Հանրապետություն	17.8	18.5	166.8
Վրաստան	3.2	3.0	151.8
Թուրքիա	0.5	0.7	2.1 անգ.
Կանադա	1.9	3.1	2.6 անգ.
այլ երկրներ	16.8	18.2	175.0

Զբոսաշրջության ցուցանիշների կառուցվածքն ու աճի տեմպը ըստ այցելության նպատակի

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2016թ. հունվար-հունիս	2017թ. հունվար-հունիս	
Ժամանողներ¹			
Ընդամենը զբոսաշրջիկներ	100.0	100.0	160.4
<i>որոնցից ըստ նպատակի</i>			
գործնական	31.6	21.9	111.2
հանգստի և ժամանցի	47.0	56.9	194.1
կրթության	0.0	0.0	3.6
բուժման	0.4	0.2	61.7
այլ	21.0	21.0	161.2
Մեկնողներ²			
Ընդամենը զբոսաշրջիկներ	100.0	100.0	38.3
<i>որոնցից ըստ նպատակի</i>			
գործնական	6.7	3.4	19.6
հանգստի և ժամանցի	86.6	63.4	28.0
կրթության	-	-	-
բուժման	0.0	-	-
այլ	6.7	33.2	189.8

¹ Բերված տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին: Ցուցանիշը ներառում է միայն ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակով ներկայացված տնտեսավարող օբյեկտների տվյալները:

² Տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջային գործակալությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը: